

Ազդարարության Trumpet's Sound փող

50-րդ ՏԱՐԻ, ԱՄՅՐԱԿԱԿԱ
ՅՈՒՆԻՒՄ - ՓԵՏՐՈՒՄ 2019



«ԱԶԳԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՓՈՎ»
երկամսյա հոգեւոր թերթ

Պատասխանատու խմբագիր՝
հովիւ Հրաչ Գուլյունեան

ACM AUSTRALIA
PO BOX 1593,
CHATSWOOD NSW 2057
EMAIL: hkiujian@acmaust.org
URL: www.acmaust.org



Բովանդակութիւն

Անոնք տեսան, եկան, երկրպագեցին
եւ փոխեցին իրենց ճամբան. 3

Հովիւ Հրաչ Գուլյունեան

Խաղաղութեան իշխան 5

Վեր. ճան Սևրոնեան

Մարգարահ. 7

Բաֆֆի Չափարեան

Նայէ ու հաշուէ աստղերը 8

Տոն Սրորմիր

Քու ձեռքդ կը բանաս 12

Վեր. Հասիպ Ալաճաճի

Եւս մէկ առաջադրանք. 13

Ռէքս Տիրլալ

Բաց նամակ մը մեր հովանաւորներուն
եւ ընթերցողներուն 15

Հովիւ Հրաչ Գուլյունեան

Կազմի նկարը՝ Չմեռ, ACM 2017թ.

ԱՍՍ-ի աղօթքի նիւթեր

- Փառք տուէք Տէրոջը 2018 թուականի Իր բոլոր օրհնութիւններուն համար:
- Աղօթէ՛ք Տէրոջը առաջնորդութեան համար:
- Աղօթէ՛ք մեր աշխատակիցներու անվտանգութեան եւ իմաստութեան համար:
- Աղօթէ՛ք կարիքաւոր ընտանիքներու համար, որոնք արձանագրուած են մեր ցանկին մէջ, սակայն տակաւին հովանաւոր չունին:
- Աղօթէ՛ք Աստուածաշունչի ուսումնասիրութեան խումբերու համար:
- Աղօթէ՛ք այս տարի Հայաստան այցելող միսիոներական խումբերուն համար:
- Աղօթէ՛ք, որ ԱՍՍ-ի բաժնած օրացոյցները օրհնութիւն դառնան շատերու համար:

Անոնք տեսան, եկան, երկրպագեցին եւ փոխեցին իրենց ճամբան

Անոնք տեսան

Իմաստունները՝ աստղը տեսնող մոզերը աւելի իմաստուն էին քան իրենց ժամանակակից մարդիկ, քանի որ անոնք գիտէին Աստուծոյ Որդիի մասին, ով պիտի ծնուէր Բեթլեհէմի մէջ: Միքիա 5:2-ի մէջ կը կարդանք. «Եւ դո՛ւն, ո՛վ Բեթլեհէմ Եփրաթա, թէ՛ւ Յուդայի հազարատրոնէրուն մէջ պգտիկ ես, բայց քեզմէ պիտի ելլէ Ան, որ Իսրայէլի վրայ իշխան պիտի ըլլայ: Ու անոր ելլը հինէն, յաւիտենական օրերէն է»: Այս խօսքը գրուած է մ.թ.ա. 8-րդ դարին՝ Միքիա մարգարէին կողմէ: Հարիրատր տարիներ անց մոզերը որոշեցին ճամբորդութիւն կատարել անապատի միջով քաջատեղեակ ըլլալով իրենց հանդիպելիք դժուարութիւններուն:

Անոնք եկան

Բոլոր դժուարութիւններէն յետոյ անոնք եկան Փրկչին՝ Թագաւորին տեսնելու: Որքա՛ն մեծ ուրախութիւն էր տեսնել Աստուծոյ, ով մանկան տեսքով մեղաւոր աշխարհ եկած էր մարդկութեան փրկութեան համար: Որքա՛ն ուրախութիւն էր անոնց համար, որ տեսան Մեսիային:

Անոնք երկրպագեցին

Իմաստունները ծունկի եկան երկրպագելու ու մեծաբելու այն Մէկին, որո՞ւ համար բերած էին իրենց նուէրները. «Տունը մտնելով՝ տեսան մանուկը իր մօրը Մարիամին հետ ու ինկան երկրպագութիւն ըրին անոր եւ իրենց գանձերը բանալով ընծաներ տուին անոր՝ ոսկի ու կնդրուկ եւ զմուռս» (Մատթ. 2:11):

Անոնք նոյն ճամբով չվերադարձան

Իմաստուն մարդիկ արձագանքեցին Աստուծոյ կոչին: Անոնք եկան եւ երկրպագեցին: Սակայն Հերովդէսը անոնցմէ ուզեց գիտնալ մանուկի գտնուելու վայրը, անոր սպանելու համար: Ուստի Աստուած երազի մէջ երեւցաւ մոզերուն ու պատուիրեց չվերադառնալ Հերովդէսին: Անոնք հնազանդեցան եւ ուրիշ ճամբայով վերադարձան իրենց երկիր:

Գուցէ սա կարեւոր պատգամ մըն է քեզի համար: Դուն կը հաւատաս, այն ինչ Աստուած ըսած է Իր Խօսքին մէջ մեղքի մասին: Դուն ապաշխարած ու ընդունած ես Անոր փրկութիւնը: Տէր Յիսուսը եկած է քու սրտիդ մէջ, եւ այժմ դուն կ'երկրպագես զինք, որպէս հզօր Աստուած ու Փրկիչ, իմանալով, որ փրկութիւնը միայն Իր միջոցով է:

Այժմ մենք կ'երկրպագենք զինք, կը հաղորդակցինք Իր հետ, մեր միջնորդի, Տիրոջ եւ վարդապետի հետ: Մենք ուրիշին չենք ուզէր երկրպագել: Մենք պետք է հնազանդինք Իրեն եւ չվերադառնանք մեր հին ճամբաներուն:

Իմաստունները հնազանդ էին եւ ուրիշ ճամբայով վերադարձան իրենց տուն: Արդեօք պատրաստ ենք հրաժարիլ մեր հին ճամբաներէն, մեր հին ցանկութիւններէն, փափաքներէն եւ ծրագիրներէն եւ ամբողջութեամբ հնազանդիլ Տէր Յիսուսին՝ Անոր անունը մեծարելու համար:

Այսօր Տէրոջմէն կարող ենք ստանալ յաւիտենական կեանքի պարգեւը, ընդունելով Իրեն որպէս մեր Տէր ու Փրկիչ: Աղօթքս է, որ յաղթական դառնաք Քրիստոսով եւ յաւիտենականութիւնը ժառանգէք:

«Վասն զի մեզի մանուկ մը ծնաւ,

Մեզի որդի մը տրուեցաւ

Եւ իշխանութիւնը անոր ուսին վրայ պիտի ըլլայ:

Անոր անունը պիտի կոչուի

Սքանչելի, Խորհրդակից, Հզօր Աստուած,

Յաւիտենականութեան Իշխան» (Եսայեայ 9:6):

Հ. Գ.

«Ո՛հ, սիրելի՛ բարեկամ, եթէ կը սիրէք ձեր զաւակներուն, ապա խորհուրդ կուտամ թոյլ չտալ անոնց վաղ մանկութեան ժամանակ աղօթք ընելու սովորութիւնն անտեսել: Եթէ ձեր զաւակներուն կ'ուզէք վարժեցնել ինչ որ բանի մէջ, ապա զոնէ տրվեցուցէք անոնց աղօթելու սովորութիւն ունենալ»:

Ճ. Ս. Ռայլ

Խաղաղութեան Իշխան

Ղուկաս 2:1-15

Ղուկաս արեւտարանին 2-րդ գլխուն մէջ կը կարդանք, թէ ինչպէս հրեշտակները արեւտեցին Յիսուսի ծնունդը: «Ահա ձեզի մանուկ մը ծնաւ Դաւիթի քաղաքին մէջ... որ պիտի կոչուի Սքանչելի, Խորհրդողակից, Հզօր Աստուած, Խաղաղութեան Իշխան»:

Բոլորս ալ կը ցանկանք խաղաղութիւն: Բայց խաղաղութեան Իշխանը ինչպէ՞ս պիտի կրնայ մեզի բերել այս խաղաղութիւնը, երբ ես եւ ուրիշը տարբեր նկարագրի տէր անձիք ենք:

Յիսուս՝ Խաղաղութեան Իշխանը կը ներկայացնէ զԱստուած: Ինչպէս թագաւոր մը կը դրկէ իշխան մը որ իր հպատակներէն տեղեկութիւն բերէ, նոյնպէս ալ Տէր Յիսուս աշխարհ եկաւ Աստուծմէ դրկուած որպէսզի մեզի բերէ այդ օրհնութիւնները: Կուգե՞ս ճանչնալ զԱստուած, եթէ Քրիստոսի յատկութիւնները չես գիտեր, չես կրնար ճանչնալ զԱստուած: Ինչպէս անձ մը ճանչնալու համար անոր հետ յարաբերութեան մէջ կը մտնես, ժամանակ կ'անցնես, հետը սեղան կը նստիս եւ կը ճաշես, նոյնպէս ալ Յիսուսը ճանչնալու համար անոր հետ ժամանակ անցնելու ես, Անոր նկարագիրը սերտելու ես, հասկնալու եւ իւրացնելու ես, գործադրելու եւ զայն անձնական կեանքիդ մէկ օրինակը ընելու ես: Կուգե՞ս զԱստուած ճանչնալ Յիսուսի միջոցաւ, ահաւասիկ կերպերը.

Ա. Խաղաղութիւն ունենալու համար պայմաններ կան, որ պէտք է ամբողջացնենք: Լման խաղաղութիւն ունենալու պայմաններէն մէկը լման յանձնուիլ է: Կուգե՞ս Քրիստոս քու Տէրդ ըլլայ, լման յանձնուելու ես Իրեն, լման վստահելով Անոր: Ան երբեք քեզ պարսպ ձեռքով, յուսախաբ կամ յուսահատ չվերադարձնէր: Լման յանձնուէ Իրեն եւ պիտի տեսնես, թէ ինչպէս Ինք քեզ կ'առաջնորդէ:

Այսօր առաջարկ մը կայ ամէն մէկուս համար, որ խաղաղութեան իշխան մը ըլլանք, Անոր հետեւորդը, Անոր համար զինուոր մը ըլլանք եւ յառաջ երթանք: Երբ որ իւրացուցած ես այդ սրտիդ մէջ, երբ ալ ըլլայ, ուր որ ալ ըլլաս այդ խաղաղութեան աղաղակը քու շրթներէդ, քու հո-

գիւղի դուրս պիտի բխի: Դէմքիդ վրայ ուրախութիւն մը եւ ժպիտ մը պիտի ըլլայ եւ այդ խաղաղութիւնը պիտի երգես:

1-ին համաշխարհային պատերազմին նոր Արեւելքը եւ Արեւմուտքը իրարու հետ կը պայքարէին, Դեկտեմբեր 25-ի ցուրտ ձմռան գիշերին, հրամանատար մը կ'ըսէ. «Լուր պիտի մնաք, Քրիստոսի ծննդեան տարեդարձն է»: Անոնք զէնքերը ձգեցին, անոնց մէջէն քաջ զինուոր մը ելաւ ոտքի ու երգեց. «Լուր գիշեր, սուրբ գիշեր, ծով ու ցամաք խռով են ահա»: Քիչ ետք բանակին զինուորներն ալ միացան անոր: Հազիւ թէ դադրեցան, թշնամի բանակէն լսուեցաւ «Փոքրիկ քաղաք Բեթլեհեմի, որքան լուր ես խաղաղ» երգը, եւ հազիւ երգը վերջացաւ այն պատմէջը որ զիրենք կը բաժնէր, անմիջապէս քանդուեցաւ եւ բանակները ողջագուրուեցան ըսելով. «Մենք եղբայրներ ենք»: Քրիստոսի ներկայութիւնը իւրաքանչիւրին խաղաղութիւն կը բերէ: Այսօր քու սրտիդ ալ խաղաղութիւն բերա՞ծ է Ան:

Ք. Խաղաղութիւն կայ այնտեղ ուր Յիսուս ներկայ է եւ կ'ապրի: Կազմակերպութիւններ եւ հաստատութիւններ օրէնքներ կը դնեն եւ եթէ օրէնքներուն հետեւիս, դժուարութիւն չես ունենար: Երկիրը օրէնք դրած է եւ եթէ մենք օրէնքէն դուրս ելլենք՝ արկած պիտի ունենանք, վնասի պիտի ենթարկուինք եւ մեր մտքերը խաղաղութիւն պիտի չունենան:

Յիսուս խաղաղութիւն կ'ուզէ տալ: Խաղաղութիւնը Աստուծմէ քեզի մեծագոյն նուէր է: Յովհ. 14:27-ին մէջ կ'ըսէ. «Խաղաղութիւն կը թողում ձեզի, Իմ խաղաղութիւնս կուտամ ձեզի, ոչ թէ ինչպէս աշխարհս կուտայ՝ ես ձեզի կուտամ: Սրտերնիդ չխռովի ու չվախնայ»: Փիլիպ. 4:7 ալ կ'ըսէ. «Աստուծոյ խաղաղութիւնը որ ամէն մտքէ վեր է, ձեր սրտերը ու մտքերը Յիսուս Քրիստոսով պիտի պահպանէ»:

Ծնունդի հոգին խաղաղութիւն է, Ծնունդի ուրախութիւնը յոյսն է, Ծնունդի կորիզը սէրն է: Ամէն:

Վեր. Ճան Մելքոնեան

Քաղուած՝ «Հատընտիր հոգեւոր պատգամներ» գիրքէն



Մարգասրահ

Մարգասրահ կը յաճախէ՞ք: Ես ամէն շաբաթ կը փորձեմ երկու-երեք անգամ երթալ: Կուզէ՞ք գիտնալ թէ ինչը կ'անհանգստացնէ զիս, երբ մարգասրահ կը մտնեմ: Ես կը նեղուիմ, երբ կը տեսնեմ թէ ինչպէս մարդիկ կը մատին մատարանին եւ 5-10 վայրկեան իրենց բջջային հեռախօսներուն մէջ կը մտնեն:

Ես հակառակ չեմ մարզումներ ընելու ժամանակ երաժշտութիւն լսելուն, բայց եթէ մարգասրահ կը մտնենք սարքաւորումներու կողքին նըստելու եւ ոչ թէ մարզուելու, քրտնելու, մարգասրահէն աւելի թարմացած դուրս գալու, ապա մենք լուրջ խնդիր ունինք: Այդպէս ընելով մարգասրահ գալը չօգտագործուեցաւ իր նպատակին:

Աւելի վատն այն է, երբ կը տեսնես որ մարդիկ մարգասրահի մէջ փոխանակ մարզուելու, կը սկսին երկար ժամանակով իրար հետ զրուցել: Երբեմն կը մտնեմ մարգասրահ ու կը տեսնեմ մարդիկ բռնուած են զրոյցի, եւ երբ դուրս գալու ըլլամ կը նկատեմ, որ անոնք նոյնիսկ կաթիլ մը քրտինք չեն ունեցած, եւ տակաւին կը զրուցեն իրար հետ: Գուցէ մէկ-երկու շաբաթով ըրած են, բայց քրտնելու չափ մարզուած չեն:

Մարզուիլը նուիրում կ'ենթադրէ: Ես նկատի ունիմ, որ եթէ դուք պատրաստ էք գումար վճարելու եւ մարգասրահի յաճախորդ դառնալու, ապա պետք է մարգասրահը օգտագործէք այն բանի համար ինչ նախատեսուած է:

Եթէ կ'ուզէք մարմնամարզութեամբ զբաղուիլ, ապա այն ձեր ամբողջ սրտով կատարէք: Եթէ ընկերներու եւ ընտանիքի անդամներու հետ ժամանակ կ'անցընէք, ապա այդ ժամանակը ամբողջապէս իրենց նուիրէք: Ձեր ամբողջ ուշադրութիւնը դարձուցէք այն ինչ ունիք ձեր ձեռքերուն մէջ տուեալ պահին: 100%-ով նուիրուէ՞ք ձեր ըրած գործին: Նոյնիսկ Աստուածաշունչը կ'ըսէ. «Ձեռքդ ինչ որ գտնէ ընելու, բոլոր ուժովդ ըրէ» (Ժող. 9:10):

Յաւօք սրտի, կան քրիստոնեաներ, ովքեր նուիրուած կեանքով չեն ապրիր, 100%-ով Աստուծոյ չեն տրուիր: Եկեղեցի կուգան, բայց անոնց ուշադրութիւնը կեղորոնացած չէ: Որոշ քրիստոնեաներ նոյնիսկ հաւա-

տարի՛ն կերպով եկեղեցի չեն յաճախէր, եւ երբ եկեղեցիին մէջ ծառայութիւն կ'ընեն, ամբողջ սրտով չեն ընէր:

Արդեօ՞ք դուք այն քրիստոնեաներէն էք, ովքեր սարքաւորումներու կողքին կը կանգնին եւ կեդրոնացած ու նուիրուած կեանքով չեն ապրիր: Թոյլ տուէք քաջալերել ձեզ ձեր լաւագոյնը ընել եւ 100%-ով Աստուծոյ տրուիլ: Ինչ որ կ'ընէք ամբողջ սրտով ըրէ՛ք, Աստուծոյ համար ապրէ՛ք ու ծառայեցէ՛ք Անոր ձեր ամբողջ ուժով:

Բաֆֆի Չափարեան

Նայէ ու աստղերը համրէ

Կարդացէ՛ք Ծննդոց 15-րդ գլուխը

Ծննդոց 15-րդ գլուխը գլխաւորապէս կը վերաբերի Աստուծոյ՝ Արահամի հետ ըրած ուխտին, սակայն այդ պատմութիւնը մեզ համար շատ դասեր ունի, մինչ կ'ապրինք մեր Տէր Յիսուս Քրիստոսի համար: Աբրահամին կը տեսնենք, որպէս հաւատքի մարդ, իսկ Աստուծոյ՝ որպէս ուխտ պահող Աստուած, ով կը պաշտպանէ Իր ժողովուրդը:

Սակայն, պատմութիւնը կը սկսի հետաքրքիր միջադէպով մը, որը հաւանաբար կապ ունի 14-րդ գլուխի հետ, որտեղ կը տեսնենք Աստուծոյ խնամքը Աբրահամի նկատմամբ: Երազի մէջ Աստուած կը յայտնրուի Աբրահամին ու կը պատուիրէ իրեն չվախնալ, քանի որ Ինքը անոր վահանն էր: Աբրահամը հաւանաբար որոշ չափով վախցած էր: Արեւելքի չորս թագաւորներուն պարտութեան մատնելէ ետք ան գուցէ կը վախնար, թէ անոնք կը վերադառնան եւ կը յարձակին իր վրայ: Անակնկալ կերպով յարձակիլը Աբրահամի ռազմավարութեան կարեւոր բաղադրիչներէն մէկն էր, եւ ան գուցէ կը մտածէր թէ այդ նոյն թագաւորները կը վերադառնան իրենց կորսնցուցածը վերականգնելու համար: Ան գուցէ նաեւ մտքեր ունեցաւ, թէ արդեօ՞ք անմիտ գտնուեցաւ՝ վերադարձնելով Սողոմի թագաւորին պատկանող բոլոր աւարը: Ի՞նչ

վարձատրութիւն ստացաւ այն բոլոր վտանգներու դիմաց որ ըրաւ: Արդեօ՞ք ապահով պիտի ըլլար: Աստուծոյ Խօսքը իրեն եղաւ ըսելով. «Սի վախնար, ով Աբրամ, ես քեզի վահան եմ ու քու վարձքդ խիստ շատ պիտի ըլլայ»: Աստուած կը խոստանար Աբրահամին Իր պաշտպանութիւնը: Բայց այս ամէնէն աւելի, Աստուած էր Աբրահամի վարձատրութիւնը:

Սակայն Աբրահամի արձագանքը ցոյց կուտայ, որ իր մտքերը ուրիշ տեղ էին: Եթէ Աբրահամը վախ ունէր, ապա աւելի հաւանական է որ այդ վախը Աստուծոյ խոստումի չիրականանալու վախն էր, որ իր սերունդը մեծ ազգ պիտի դառնար: Իր ժառանգը իր տան մէջ ծնած մարդն էր, որը իր որդին չէր: Այս ամէնը հաշուի առնելով Աբրահամը Աստուծոյ կը հարցնէ, թէ իր վարձքը ինչ պիտի ըլլայ: Եթէ Աստուած էր իր վարձատրութիւնը, ապա արդեօ՞ք Ան իրեն զաւակ պիտի պարգեւէր: Ուստի Աստուած Աբրահամին վստահեցուց, թէ Եղիազարը պիտի չժառանգէր զինք, այլ ան, ով իր երանգէն դուրս պիտի գար:

Աստուած հաստատեց Աբրահամին Իր խոստումը՝ զինք դուրս բերելով եւ մարտահրաւէր ընելով, որ ան գիշերային երկնքի աստղերը հաշուէ: Աստուած Աբրահամին խոստացաւ, որ իր ժառանգները անհամար աստղերու չափ շատ պիտի ըլլան: Աբրահամը հաւատաց Եհովային, ով Աբրահամի հաւատքը իրեն արդարութիւն ըլլալ սեպեց:

Տէրը շարունակեց Աբրահամին ցոյց տալ Իր պատասխանը յիշեցնելով, որ Ինքն է Տէրը, ով իրեն դուրս հանեց Քաղդէացիներու Ուր քաղաքէն, որպէսզի տայ իր պանդխտացած երկիրը, որպէս ժառանգութիւն: Աբրահամը հարցուց Տիրոջը, թէ ինչպէս պիտի գիտնայ թէ պիտի ժառանգէ այդ երկիրը: Այս հարցի պատասխանը պիտի ըլլար այն սպառնիչ ապացոյցը, որը պիտի փարատէր Աբրահամի՝ Աստուծոյ իրեն պաշտպանելու կարողութեան և Իր խոստումները պահելու իրաքանջիւր կասկած:

Աստուած Աբրահամին պատուիրեց, որ բերէ երեք տարեկան երինջ մը, ու երեք տարեկան այծ մը, եւ երեք տարեկան խոյ մը, ու տատրակ մը եւ աղանիի ձագ մը: Աբրահամը այս բոլորը Տիրոջը բերաւ եւ մէջտեղէն կիսեց զանոնք, եւ ամէն մէկ կտորը մէկը միւսի դիմացը դրաւ. բայց թռչունները չկտրեց: Ի՞նչն էր այս գործողութիւններու նշանակութիւնը:

Երեմիայի մարգարէութիւնը կը բանանք իմանալու համար այս ամէնի նշանակութիւնը: Երեմիայ 34:18-ի մէջ կը կարդանք. «Եւ զուարակը երկուքի կտրելով ու անոր կտորներուն մէջտեղէն անցնելով՝ իմ ամօջես ըրած ուխտերուն խօսքերը չկատարող, եւ իմ ուխտս զանց ընող մարդիկը պիտի մատնեմ»: Ըստ էութեան, ասիկա կը նշանակէ, թէ երբ մարդիկ հանդիսաւոր ուխտ կ'ընէին, կենդանական զոհը մէջտեղէն երկու մասի կը կիսէին ու անոր միջով կ'անցնէին: Իրականութեան մէջ իրենց այդ քայլով կ'ուզէին ըսել, թէ ով որ չպահէ իր խոստումը պատրաստ է կենդանիին մման մէջտեղէն կիսուելու: Մինչ Աբրահամը կը պատրաստէր զոհը, ան կը պատրաստուէր Աստուծոյ հետ ուխտի մէջ մտնելու:

Պատմութիւնը կ'ըսէ թէ, մինչ արեւը մար կը մտնէր, խորունկ քուն մը եկաւ Աբրահամի վրայ եւ մեծ մթութեան սուկում մը: Այնուհետեւ Աստուած խօսեցաւ Աբրահամին ու ըսաւ թէ ինչ պիտի պատահի իր սերունդին հետ: 400 տարի անց անոնք պիտի ստանան այն երկիրը, որտեղ Աբրահամ կը գտնուէր: Անոր սերունդը, որպէս օտարական ու պանդուխտ պիտի բնակէր երկրի մը մէջ, որը իրենց չէր պատկանէր եւ պիտի ծառայէր այդ երկրի մարդկանց: Ծառայութիւնը հաճելի պիտի չ'ըլլար անոնց համար, եւ անոնք 400 տարի պիտի չարչարուէին: Սակայն, Աստուծոյ՝ Աբրահամի հետ ըրած խոստումի համաձայն, անոնք, ովքեր Աբրահամին անիծեցին Աստուծոյ անէծքի տակ պիտի մտնեն: Աստուած պիտի դատէ Աբրահամի սերունդին նեղութիւն տուող ազգին: Աբրահամի սերունդը չորրորդ դարուն մէջ կրկին պիտի վերադառնայ: Անոնք անմիջապէս պիտի չստանան իրենց ժառանգութիւնը, քանի որ Ամօրհացիներու անօրէնութիւնը դեռ լեցուած չէ, եւ դատաստանը անմիջապէս պիտի չկատարուի անոնց վրայ:

Ասկէ ետք շատ ուսուցողական բան մը կ'իմանանք Աստուծոյ ճամբաներու մասին. «Երբ արեւը մարը մտաւ ու խաւար եղաւ, ահա միւսած հնոց մը ու վառած ջահ մը այն կտորներուն մէջտեղէն անցաւ»: Սակայն Աբրահամը չանցաւ զոհուած կենդանիներու երկու կէսի բաժնրուած մարմիններու մէջտեղէն: Այսպէս Աստուած ցոյց կուտայ, թէ Ան անպայմանական ուխտ կ'ընէ Աբրահամի հետ: Օր մը Աստուած Աբրահամի սերունդին պիտի տայ ողջ երկիրը՝ Եգիպտոսի գետէն մինչեւ մեծ գետը, այսինքն՝ Եփրատ գետը, երկիր մը, որու մէջ այդ ժամանակ կը բնակէր տասը տարբեր ժողովուրդներ:

Որո՞նք են այն ճշմարտութիւնները, որը պէտք է հասկնանք: Նախ՝ Աստուծոյ հաճելի կեանքը հաւատքի կեանքն է: Եթէ Աստուած քան մը կ'ըսէ, ուրեմն մեր պարտականութիւնն է հաւատալ Իրեն:

Աստուած պիտի պահէ Իր խոստումը. խոստման կատարումը գուցէ շուտով չըլլայ, բայց այն անպայման պիտի կատարուի: Աբրահամի ժառանգները երկիրը պիտի ժառանգէին հարիւրաւոր տարիներ անց, բայց խոստումը պիտի պահուէր: Աստուած երբեք չէ ձախողած ընելու այն, ինչ խոստացած է ընել:

Շատ մը Աստուծոյ խոստումներ անպայմանական են: Եթէ Աստուած անպայմանական ուխտի մէջ կը մտնէ, այդ ուխտով Իր խոստացած օրհնութիւնները բացառապէս Իրմէ կախուած են: Մենք կարող ենք աւելի մեծ վստահութիւն ունենալ, որ կստանանք այն, ինչ Ան խոստացած է, քանի որ թէւ մենք յաճախ կը ձախողինք, սակայն Ան երբեք չի ձախողիր:

Եթէ արձագանքենք Աբրահամի նման եւ հաւատանք Աստուծոյ, ապա Ան առանց որեւէ պայմանի կը պահէ մեզ: Մենք Իրն ենք յաւիտեան:

Տոն Սթորմըր



«Մովսէսը քառասուն տարի անցուց մտածելով թէ ինքը ինչ որ մէկն է, եւ քառասուն տարի անցուց սորվելով, թէ ինքը ոչինչ է, եւ քառասուն տարի՝ բացահայտելով, թէ Աստուած ինչ կրնայ ընել ոչինչ եղող մարդու հետ»:

S. L. Մուտի

«Աւելի շատ կ'ուզէի աղօթել, քան քարոզել: Յիսուս Քրիստոսը Իր աշակերտներուն երբեք չսորվեցուց ինչպէս քարոզել, այլ միայն թէ ինչպէս աղօթել»:

S. L. Մուտի

Քու ձեռքդ կը բանաս ու ամէն կենդանիին փափաքը կը լեցնես

(Սաղմոս 145:16)

Աստուծոյ ձեռքը միշտ բաց է: Անիկա առատօրէն կուտայ բոլոր
Իրմէ խնդրողներուն:

Նոյեմբեր եւ Դեկտեմբեր ամիսներուն մէջ ունինք Գոհաբանութեան
եւ Ծննդեան տօները: Տարուան այն եղանակն է երբ մարդիկ իրարու
նուէրներ կուտան եւ կը ստանան: Մեծագոյն տոտողը Աստուած Ինքն
է, որ Իր ձեռքը կը բանայ ու բոլորին փափաքը կը լեցնէ:

Աստուած ամէն օրհնութեան ակն ու աղբիւրն է: Իրմէ կը ստանանք
բոլոր նիւթական եւ հոգեկան օրհնութիւնները: Մատթէոս 5:45-ի մէջ կը
կարդանք թէ Ան իր արեւը կը ծագեցնէ թէ չարերուն եւ թէ բարիներուն
վրայ: Ուստի դուն, ով որ ես, Աստուած քեզի տուած է ինչ որ դուն ունիս:

Աստուծոյ ձեռքը միշտ բաց է մեզ Իրեն հրաւիրելու: Իր ձեռքը բա-
ցած իւրաքանչիւր անձի կ'ըսէ. «Եկուր Ինձի ու Ես քեզ պիտի հանգչեց-
նեմ» (Մատթ. 11:28): Իր զաւակները կը հրաւիրէ մօտենալու Իր շնոր-
հաց աթոռին՝ ողորմութիւն ընդունելու (Եբր. 4:16):

Աստուած ձեռքը կերկարէ մեզ բռնելու, վերցնելու, դուրս հանելու մե-
ղաց տիղմէն եւ մեր բոլոր նեղութիւններէն մեզ ազատելու: Խոստացած
է Իր արդարութեան աջովը մեզ բռնել (Սաղ. 40:2, Եսայեայ 41:10):

Ուստի գիտակցօրէն փառք տանք Աստուծոյ, որ Իր ձեռքը բաց է ա-
մէն շնչատու մարդ արարածին փափաքը լեցնելու հոգեւոր եւ նիւթա-
կան օրհնութիւններով: Երբ Աստուած խոստացած է մեր փափաքները
լեցնել, մտածենք թէ մենք որչա՞փ Իր փափաքները ի գործ կը դնենք:

Վեր. Հապիպ Ալաճաճի

Քաղուած՝ «Հոգեւոր խորհրդածութիւններու կաթիլներ» գիրքէն

Եւս մէկ առաջադրանք

Նոյնիսկ հիանալի տօներէն ետք շատեր կը զգան աշխատանքի վերադառնալու ճնշումաբեռները: Մեր հասարակութիւնը կարծես թէ բաժնուած է երկու խումբի՝ ծանրաբեռնուած աշխատողներու եւ ոչ ծանրաբեռնուած աշխատողներու: Վերջերս լսեցի ռատիոհաղորդում մը Նոր Զելանտայի մէջ առողջապահական նոր վտանգի մը մասին: Հաւատաք. թէ ոչ, այդ՝ սթրեսի պակասութեան հիւանդութիւնն է: Մարդկանց մեծամասնութիւնը առանց մարտահրաւէրներու կեանք կը վարէ: Այս մարդիկ ենթակայ են ֆիզիկական անգործութեան, քանի որ չունին առաջ շարժուելու խթանող բաւարար սթրես, որը իրենց կը դրդէ օգտակար գործողութիւններու: Այս միտքը համեմատեք հազարաւոր այլ մարդկանց հետ, ովքեր ծանրաբեռնուած ու սթրեսի տակ կ'աշխատին, ինչի պատճառով բժիշկներու, խորհրդատուներու, վերականգնողական դասընթացներու օգնութեան կարիք կը զգան, կամ պարզապէս կը փորձեն ելք գտնել տարբեր տեսակի կախումաբեռնութիւններու միջոցով: Կայ գերաշխատող եւ ոչ գերաշխատող, կայ չափազանց սթրեսով աշխատող եւ ոչ սթրեսով աշխատող:

Նման իրավիճակներ կարելի է նկատել նաեւ մեր եկեղեցիներուն մէջ: Որոշ քրիստոնէայ ընտանիքներու վրայ դրուած եկեղեցական պարտաւորութիւնները կը վախցնեն զիս: Անոնք կարծես չափազանց շատ կ'աշխատին ու սթրեսի տակ են: Սիւս կողմէն՝ ուրիշներ կարծես թէ քիչ կ'աշխատին եւ ընդհանրապէս սթրես չունին: Երկուքն ալ վնասակար կրնան ըլլալ: Մենք մնան ենք ջութակի լարերուն: Չափազանց լարուածութեան ժամանակ այն կը կոտրի, անբաւարար լարումութեան ժամանակ այն երաժշտութիւն չ'արձակէր: Մարդիկ կան, որոնք չափէն աւելի սթրեսի տակ ըլլալով կը կոտրուին, իսկ ուրիշներ՝ շատ քիչ սթրեսի տակ ըլլալով քիչ բան կ'իրագործեն: Երբ քրիստոնէական ծառայութիւն ընելու առաջարկ կը տրուի, խումբ մը մարդիկ կան, որ իրենց համար դժուար է կամ նոյնիսկ անհնար է «ոչ» ըսելը, մինչ միւս խումբի մարդկանց համար նոյնքանով դժուար է ծառայութեան համար «այո» ըսելը: Այս խումբերէն իւրաքանչիւրը խնդիր ունի:

Անոնք ովքեր չափազանց սթրեսի տակ են, լաւ կ'ըլլայ խորհրդածեն

հետեւեալ հարցի շուրջ. «Ինչո՞ւ «ոչ» ըսելու կը դժուարանամ»: Կան բազմաթիւ պատճառներ, որոնք կը ստիպեն ոմանց պէտք եղածէն աւելի գործունէութիւններու մէջ ընդգրկուիլ:

Միւս կողմէն, անոնք որոնք իրենց կեանքին մէջ քիչ մարտահրաւերներ ունին, պէտք է իրենք իրենց հարցնեն, թէ ինչո՞ւ կը դժուարանան «այո» ըսել, երբ ծառայութեան համար առիթ մը կը տրուի իրենց: Նոր մարտահրաւեր կը նշանակէ ընդունիլ նոր բան: Այն կը ներառէ հաւատք, հաւատալ, որ դուք ինչ-որ բան պէտք է տաք, եւ որ Աստուած ուժ կուտայ ձեզ տալու այն: Ինչպէս Քրիստոսը Պետրոսին հրամայեց նաւակէն դուրս գալ ու ջուրին վրայ քալել (Մատթ. 14:28), այդպէս Ան մեզ կը պատուիրէ մեր յարմարավետ տարածքէն դուրս գալ: Աստուծոյ հետ մտերիմ կեանքը կ'օգնէ մեզ «ոչ» ըսել, երբ այդպէս ընելու անհրաժեշտութիւն ըլլայ, նմանապէս՝ ինչ-որ նոր մարտահրաւերի «այո» ըսել, եթէ իսկապէս Աստուած է մեզ առաջնորդողը:

Միայն անոնք, որոնք կ'ապրին Անոր ներկայութեան մէջ եւ կը սորվին վայելել իրենց ինքնութիւնը Աստուծոյ մէջ, իրենք իրենց հանգիստ կը զգան, երբ պէտք կ'ըլլայ ծառայութեան մը «ոչ» ըսել կամ քաջութիւն ունենալ «այո» ըսել, երբ ծառայութեան համար ճիշտ հնարաւորութիւն ընձեռուի:

Զգուշացէ՛ք զբաղուած կեանքի անբերութիւնէն:

Ռէքս Տիրլալ

Սաղմոս 65:1-5

Քեզի կը վայլէ օրհնութիւնը, ո՛վ Աստուած, Սիօնի մէջ: Ու Քեզի ըրած ուխտերը պիտի կատարենք: Ո՛վ աղօթքի լսող, Քեզի պիտի գայ ամէն մարմին: Անօրէնութիւնները իմ վրաս ճնշեցին: Մեր մեղքերը Դուն պիտի քաւես: Երանի՜ր անոր որ կ'ընտրես ու Քեզի կը մօտեցնես, որպէս զի բնակի քու սրահներուդ մէջ, պիտի լցուինք Քու տանդ եւ Քու սուրբ տաճարիդ բարութեամբ: Սքանչելի բաներով, արդարութիւնով պիտի պատասխանես մեզի, ո՛վ մեր փրկութեան Աստուածը, որ երկրի բոլոր ծայրերուն ու ծովերէն հեռու եղողներուն յոյսն ես:

Բաց նամակ մեր հովանաւորներուն եւ ընթերցողներուն

Օրինեալ է Տէրը, որ մեզ վստահեցաւ Հայաստանի մէջ ծառայութիւնը: Անոր շնորհքով մենք աւելի քան 29 տարի կը ծառայենք հայրենիքէն ներս: Աստուած մեր սրտերուն մէջ սէր դրաւ մեր հայրենակիցներու նկատմամբ եւ մենք տեսանք անոնց ցաւը, պայքարը եւ հիւանդութիւնը: Բայց անոնց կարիքները ոչ միայն ֆիզիկական են, այլեւ՝ հոգեւոր:

Հայաստանի մէջ ասացուած մը կայ, որ կ'ըսուի. «Յաւղ տանեն», որը կը նշանակէ թոյլ տալ կրել դիմացինի ցաւը: Այո՛, Հայաստանը կարիք ունի մարդկանց, ովքեր կարող են օգնել եւ կրել ուրիշներու ցաւը: Դժուար չէ պատկերացնել, թէ ինչպիսի ծանրութիւն է, երբ բժշկական օգնութեան կարիք ունիս, բայց եկամտուի որեւէ աղբիւր չունիս, որ վճարես հիւանդանոցի ծախսերը:


Մարդիկ օրական երկու տոլար կը վաստակին: Որպէս Արեւմուտքի բնակիչներ մենք երբեք պիտի չկրնանք հասկնալ անոնց վիճակները, եթէ չ'այցելենք ու մեր աչքերով չտեսնենք այդ բոլորը: Շատ արցունքներ եւ տխրութիւն կայ անոնց աչքերուն մէջ, բայց մեր ամենամեծ ուրախութիւնն այն է, երբ կը տեսնենք անոնց քաղցը Յիսուսի համար:

Յիսուս ըսաւ. «Եկէ՛ք ինձի, բոլոր յոգնած ու բեռնաւորուածներ եւ ես ձեզ պիտի հանգչեցնեմ: Իմ լուծս ձեր վրայ առէք եւ ինձմէ տրվեցէ՛ք՝ որ հեզ եմ ու սրտով խոնարհ եւ ձեր անձերուն հանգստութիւն պիտի գտնէք. վասն զի իմ լուծս քաղցր է եւ իմ բեռս թեթեւ»: (Մատթ. 11:28-30):

Այո, անոնք քաղցած են Խօսքի համար, քաղցած են ներքին խաղաղութեան համար: ACM-ը ուր հաւատարիմ աշխատակիցներ ունի, որոնք ամէն օր կ'աշխատին այդպիսի մարդկանց մէջ: Դուք նոյնպէս կրնաք մաս կազմել այս ծառայութեանը՝ աղօթքով, մեր միախոնրական խումբին միանալով կամ ֆինանսապէս աջակցելով:

Մի քանի կարիքներ նշեմ, ըստ հրատապութեան.

- Վերանորոգման շտապ աշխատանքներ Կիւմրիի «Անկիւնա-



քար» կեդրոնին մէջ (սալիկապատում եւ ասֆալթապատում):

- Հրատապ աշխատանքներ Կիւմրիի «Շնորհք» կեդրոնին մէջ. երեք նոր սանհանգոյցներ եւ կարիքատրներուն ծառայելու համար խոհանոց:
- Մինիպաս՝ սնունդ բաժնելու, տարեցներուն ժողովներու բերելու եւ հիւանդներուն բժիշկներուն տանելու համար:
- Հոգեւոր մշակներու հովանաւորութիւն:
- Կարիքատր ընտանիքի հովանաւորութիւն՝ սնունդի կամ ամսական օժանդակութեան տեսքով:
- Գրականութեան ծառայութեան աջակցութիւն:
- Ուսանողի ուսման վճարի հովանաւորութիւն:
- Բժշկական օգնութիւն:
- Ձմեռուայ վառելափայտ եւ ջեռուցում:
- CEF-ի մանկական ծառայութիւններու աջակցութիւն:

Շնորհակալ ենք ձեր աջօրքներուն եւ աջակցութեան համար:
Թող Տէրը առատապէս օրհնէ ձեզ բոլորիդ:

Հ. Գ.